ձլ.

Հայր ղազարն պատմեաց թէ տեղդ լուեալ էք թէ աստ նորաձև հաւատ ելեալ է, և յոյժ կաս-կածանք կայ տեղդ վասն սոյայ. թէպէտ իրաւ է որ եղև սակաւ ինչ վրդովմունք, սակայն ոչընչացաւ. և բանն էր այսպէս, որ ոմանք խելագարք ըսկսեալ էին իբր մէկ ընկերաքցութիւն յառաջ ածել որ էր ոչինչ բան, և անուն ընկերաքցութեանս է Ֆ Ֆռայի մաւուր, որոյ վերջաւորութիւն էր կոչմունք ուտել և ըմբել և խենթ, խնդումն որ ոչ վայելէ հաւատոյ, և սակաւ ինչ նշան կա-խարդական կայր. զայս յայտնուեցաւ. թագուհին պատժեաց զոմանս ի բանդ զոմանս ի մեծութենէ և ի ծառայութենէ իւրմէ. և ածմն բովանդակն ոչընչացաւ ամենևին չի լսվիլ։ (Պ. Դաւիթ Ցովա-նիսեան առ Միսիթար, յամին 1743 յունիսի ԺԵ. Վիեննայ)։

ձթ.

Նախ քան պատրիարքին[1] չուելն Լիվորնայու, սահակ եպիսկոպոսն տկարացեալ էր բայց ետոյ արողջացեալ և գնացեալ է ընդ նմա. տեղս տօն տօմէնիքոն նոյն պատրիարգին աճէնթոն է։ Եւ նոյն գրովս ծանուցի հրամանուցդ թէ Փափն[2] 24 կարտինալ պիտի անէ...։ Փափն այս ամիսս որպէս սովոր էր դուրս Վիլլէճադուրա[3] չի գնաց վասն մահի չոշորդին. ոչ միայն հոսմ այլ ամե-նայն քաղաք և գեղուրայս դռներն սօլտաթներով նային. ոչ միայն այս, այլ զանազան տեղիս ըսպանեալի բազում սօլտաթներ կան։ (Պատկերահան Ցովհաննէս առ Միսիթար, յամին 1743 հոկ-տեմբերի 12, ի Հռովմ)։

ղ.

Լուաք թէ Աբրահամ կաթուղիկոսն զմեծագոյն հալածանս կրեալ է, և թէ ժողովուրդքն երկու հարիւր քսակ ճուրում տալոցք են. ասեն թէ զհարիւրն վճարեալք են, և զմիւս հարիւրն ոչ կա-րելով վճարել ցիր և ցան եղեալք են։ (Հ. Ղազարոս առ Միսիթար, յամին 1743 հոկտեմբերի 22, [Եղիսաբեթուպոլիս])։

ղա.

Եւ վասն Բաղրիա[ր]քին... խիստ վատ խապար լսեցի. որ գրիլ էր հոսմայու տիրացու յով-սէփն, թէ գնածիլ է լիբանան լեառն և մեծ խրովութիւն ելիլ է ի վերայ ուղափառած, այսինքն հերետիկոսներն և հալածիլ ին զուղափառքն, և 200 քիսայ փող ճուրում առիլ ին. և զիրեքումն ալ կամէցիլ ին առնելոյ. և չին քնացիլ ու շատ չարչարանք և նեղութիւն քաշիլ ին ուղափառքն, և այնպէս ամենեքեանն ի փախուստ իղիլ ին։ (Աղաչայ Պետրոս [կը գրէ միշտ անուանը Պրքէլի՝ վրան պատիւով] առ Միսիթար, յամին 1743, նոյեմ. 20. Էշիզարէբն)։

ղբ.

Վասն իսկէլէին զորմէ գրեալ ես թէ նորաշէն քարամբք չինելոց ես, և թէ քան զառաջինն ընդարձակագոյն լինելոց է՝ տեղին որ առաջի դրանն է, և յոյժ բարւոք լինի ով տէր իմ, և

---

1. Աբրահամ Պետրոս Ա.։
2. Բենեդիկտոս ԺԴ.։
3. = Գիւղաքնացութեան։